*Տպագիր ամփոփագրի պայմանները կարող են փոփոխված լինել. Տպագիր ամփոփագրի պայմանները կայքում հրապարակվածգործող պայմաններից փարբերվելու դեպքում անհրաժեշտ է դիմել մասնաճյուղ կամ առաջնորդվել կայքում առկա փարբերակով: Ամբողջական պայմանները՝ [https://www.ardshinbank.am/content/ձեռքբերում/](https://www.ardshinbank.am/content/ձեռքբերում/) հղմամբ:*

## ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿ – ԱՌԱՋՆԱՅԻՆ ԿԱՄ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻՑ ԲՆԱԿԵԼԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՎԱՐԿԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

| | | |
|---|---|---|
| **Վարկի արժույթ** | ՀՀ դրամ | |
| **Հայտի և փաստաթղթերի ընդունման վայր** | Բանկի բոլոր մասնաճյուղեր, Գլխամասային գրասենյակ | |
| **Վարկի ֆինանսավորման աղբյուր** | «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ | «Արդշինբանկ» ՓԲԸ |
| **Վարկի նպատակ** | 1. Կառուցապատման աշխատանքներն ավարտվածբնակելի անշարժ գույքի ձեռքբերում<br>2. Կառուցվող բնակելի անշարժգույքի (կառուցվող բազմաբնակարան շենքում բնակարանի) (դրա նկատմամբ իրավունքների) ձեռքբերում | 1. Կառուցապատման աշխատանքներն ավարտված բնակելի անշարժ գույքի ձեռքբերում,<br>2. Կառուցվող բնակելի անշարժ գույքի (դրա նկատմամբ իրավունքների) ձեռքբերում,<br>3. Այլ ֆինանսական կազմակերպություններում տվյալ անշարժ գույքի ձեռքբերման նպատակով ստացված հիփոթեքային վարկի վերաֆինանսավորում |
| **Վարկի նվազագույն գումար** | 3 000 000 ՀՀ դրամ | Չի սահմանվում |
| **Վարկի առավելագույն գումար** | 35 000 000 ՀՀ դրամ | 200 000 000 ՀՀ դրամ |
| **Ձեռքբերվող գույքի առավելագույն արժեք** | 3.0 - 35.0 մլն (ներառյալ) ՀՀ դրամ վարկերի դեպքում՝ 55.0 մլն ՀՀ դրամ | Չի սահմանվում |
| **Տոկոսադրույքի տեսակը** | Հաստատուն | 1. Հաստատուն (ճշգրտվող)[1],<br>2. Լողացող[2] |
| **Տարեկան տոկոսադրույք հաստատուն/ հաստատուն (ճշգրտվող)[1]** | 13.6 – 14.5%,<br>/համաձայն Աղյուսակ 1-ի/ | Մինչև 35.0 մլն (ներառյալ) ՀՀ դրամ գումարով վարկերի դեպքում՝ 13.7%,<br>35.1 - 200.0 մլն (ներառյալ) ՀՀ դրամ գումարով վարկերի դեպքում՝ 14.5% |
| **Տարեկան տոկոսադրույք (լողացող)[2]** | - | ՀԴ+4.5% |
| **Տարեկան փաստացի տոկոսադրույք** | 14.6-15.7% | 14.4-15.7% |
| **Նվազագույն ժամկետ** | 120 ամիս | 120 ամիս |
| **Առավելագույն ժամկետ** | 240 ամիս | 240 ամիս |
| **Վարկի և տոկոսագումարի մարումներ** | Ամենամսյա հավասարաչափ վճարումներ (անուիտետ) | |
| **Նվազագույն կանխավճար բնակարանի ձեռքբերման արժեքից** | 7.5%[1] | 10% |

| | | |
|---|---|---|
| **Վարկային հայտի ուսումնասիրության վճար** | 5 000 ՀՀ դրամ | |
| **Վարկի տրամադրման միանվագ միջնորդավճար** | չի սահմանվում | |
| **Գրավի ձևակերպման վճար**** | 1) Կառուցապատման աշխատանքներն ավարտված գույքի նկատմամբ վարկառուիսեփականության և Բանկի գրավի իրավունքի գրանցման դեպքում՝ 71,200 ՀՀ դրամ<br>2) Կառուցապատման ընթացքում գտնվող գույքի նկատմամբ վարկառուի գնմանիրավունքի և Բանկի գնման իրավունքի գրանցման դեպքում՝ 53,100 ՀՀ դրամ<br>3) Բանկի գնման իրավունքի գրավի կամ լրացուցիչ գույքի նկատմամբ Բանկի գրավի իրավունքի գրանցման դեպքում՝ 27,100 ՀՀ դրամ | |
| **Վարկի ամսական սպասարկման վճար** | Չի սահմանվում<br>*Ամսական սպասարկման վճարների չափը վարկի գործողության ամբողջ ընթացքումփոփոխման ենթակա չէ;* | |
| **Գույքի ձևակերպման համար այլ կատարվող վճարներ** | Վարկառուն վճարում է՝<br>1) գույքի գնահատման,<br>2) գույքի նկատմամբ սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանքիստացման և<br>3) գրավի պայմանագրերի նոտարական վավերացման համար, որն ընդհանուր արժեքովկարող է կազմել 40,000 ՀՀ դրամից 105,000 ՀՀ դրամ, ներառյալ լրացուցիչ գույքի գրավադրման դեպքում ծախսերը: | |
| **Քաղվածքների տրամադրում** | Անվճար՝ մինչև 1 ամիս կտրվածքով քաղվածք,<br>Անվճար՝ տարեկան առնվազն չորս անգամ, վարկառուի պահանջով՝ վերջինիս կողմից նշված ժամանակահատվածի համար,<br>1000-5000 ՀՀ դրամ՝ այլ ժամանակահատվածով քաղվածքներ և տեղեկանքներ (տես՝ https://www.ardshinbank.am/content/բանկային-հաշիվ/): | |
| **Վարկ/Գրավ առավելագույն հարաբերակցություն** | 92.5% | 90% |
| Առաջնային շուկայից ձեռք բերվող գույքի դեպքում, եթե բնակարանի հետ հետ միաժամանակ ձեռք է բերվում ավտոկայանատեղի (ավտոտնակ), վերջինը նույնպես կարող է ընդունվել որպես գրավ, եթե վարկը տրամադրվում է Բանկի սեփական ռեսուրսներով: | | |
| **Վարկերի տրամադրման կարգ** | Միանվագ | Միանվագ |
| **Վարկի տրամադրման եղանակ** | Անկանխիկ՝ Բանկում վարկառուի անվամբ բացված բանկային հաշվին փոխանցման միջոցով | |
| **Վաճառողի կողմից վարկի և կանխավճարի հանրագումարի կանխիկացման վճար** | չի սահմանվում | |

| | | |
|---|---|---|
| **Համավարկառուների փոփոխության իրականացման համար սահմանված հայտի ուսումնասիրության վճար** | 15 000 ՀՀ դրամ | |
| **ՎԱՐԿԱՌՈՒԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ** | | |
| **Վարկառուի կարգավիճակ** | ՀՀ քաղաքացի ֆիզկական անձ, որի եկամուտների հիմնական աղբյուրը գտնվում է ՀՀ-ում | ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձ (այդ թվում՝ ԱՀ քաղաքացի ֆիզիկական անձ, ով հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ) |
| **Համավարկառուին ներկայացվողպահանջներ** | 21 տարին լրացած ՀՀ քաղաքացի ֆիզիկական անձ՝<br>-ով հանդիսանում է վարկառուի ընտանիքի անդամ* և<br>- որի տարիքը վարկի տրամադրման պահին չպետք է գերազանցի 60 տարեկանը (մինչև 61 տարեկանը լրանալը):<br>Տարիքի նկատմամբ պահանջը չի կիրառվում, եթե համավարկառուն իր եկամուտներով և պարտավորություններով մասնակցություն չի ունենում վարկի հաստատմանը: | 21 տարին լրացած ֆիզիկական անձ, որի տարիքը վարկի տրամադրման պահին չպետք է գերազանցի 60 տարեկանը (մինչև 61 տարեկանը լրանալը):<br>Պահանջը չի կիրառվում, եթե համավարկառուն իր եկամուտներով և պարտավորություններով մասնակցություն չի ունենում վարկի հաստատմանը:: |
| **Վարկառուի տարիք** | 21 տարին լրացած ֆիզիկական անձ, որի տարիքը վարկի մարման վերջնաժամկետին չպետք է գերազանցի 65 տարեկանը (մինչև 66 տարեկանը լրանալը): | |
| **Վարկառուին և համավարկառուին ներկայացվող այլ պահանջներ** | Բջջային հեռախոսահամարի և էլեկտրոնային փոստի հասցեի առկայություն | |
| **ԳՐԱՎԻ ԱՌԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ** | | |
| **Ապահովվածություն (Կառուցապատման աշխատանքներն ավարտված բնակելի անշարժ գույքի ձեռքբերման դեպքում)** | 1.Ձեռքբերվող բնակելի անշարժ գույք,<br>2. Հավելյալ բնակելի անշարժ գույք (երկրորդ գրավ) | Ձեռքբերվող բնակելի անշարժ գույք |
| **Ապահովվածություն (Կառուցվող բնակելի անշարժ գույքի (դրա նկատմամբ իրավունքների) ձեռքբերում (այդ թվում՝ էներգաարդյունավետ բնակելի տան/բնակարանի) ձեռքբերման դեպքում)** | 1. Կառուցվող անշարժ գույքը գնելու իրավունքի գրավ և<br>2.Կառուցապատողի՝ Բանկում բացված հատուկ հաշվին<br>2.1 Բանկի կողմից փոխանցված վարկային միջոցների գրավ՝ առնվազն վարկի ամբողջ գումարի չափով արգելադրման կիրառմամբ, ինչպես | 1. Ձեռքբերվող անշարժ գույքի դեպքում՝<br>1) Կառուցվող անշարժ գույքը գնելու իրավունքի գրավ և<br>2.1) Կառուցապատողի՝ Բանկում բացված հատուկ հաշվին Վարկառուի կողմից մուտքագրված դրամական միջոցների առաջնային |

| | | |
|---|---|---|
| | նաև<br>2.2 Վարկառուի կողմից մուտքագրված դրամական միջոցների (կանխավճար) առաջնային և/կամ հաջորդող (եթե նշված դրամական միջոցները պայմանագրի ուժով համարվում են գրավադրված /առաջնային գրավ/ Վարկառուի օգտին) գրավ (բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է վարկառուի համաձայնությունը՝ իր կողմից մուտքագրված կանխավճարը կառուցապատողի կողմից օգտագործվելու համար):<br>2.2.2 կանխավճարի ապահովագրություն: | և/կամ հաջորդող (եթե նշված դրամական միջոցները պայմանագրի ուժով համարվում են գրավադրված /առաջնային գրավ/ Վարկառուի օգտին) գրավ՝ վարկի ամբողջ գումարի չափով՝ արգելադրման կիրառմամբ կամ<br>2.2) հավելյալ բնակելի անշարժ գույք (երկրորդ գրավ) :<br><br>2. Վերաֆինանսավորման դեպքում՝<br>1) Կառուցվող անշարժ գույքը գնելու իրավունքի գրավ և<br>2) Հավելյալ բնակելի անշարժ գույք (երկրորդ գրավ): |
| **ՏՈՒՅԺԵՐ, ՏՈՒԳԱՆՔՆԵՐ** | | |
| **Վարկառուի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում** | 24% տարեկան՝ ժամկետանց վարկի նկատմամբ | |
| **Ժամկետանց տոկոսագումարի դիմաց տույժ** | 48% տարեկան | |
| **Վարկի վաղաժամկետ մարման տույժ** | Չի սահմանվում | |
| **ՈՐՈՇՄԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ, ԳՈՐԾՈՆՆԵՐ** | | |
| **Որոշման կայացման ժամկետ** | 4-7 օր | |
| **Որոշման մասին տեղեկացման ժամկետ** | 1 օր | |
| **Տրամադրման ժամկետ** | 1 աշխատանքային օր՝ գրավի պայմանագիրը նոտարական վավերացում և գրավը կադաստրային գրանցում ստանալուց հետո | |
| **Դրական որոշման գործոններ** | վարկավորման պայմանների համապատասխանություն և պահանջվող փաստաթղթերի պատշաճ ներկայացում | |
| **Վարկի մերժման գործոններ** | Վարկառուի/համավարկառուի բացասական վարկային պատմություն, թերի ներկայացված փաստաթղթեր, հաճախորդի անբավարար վարկարժանության գնահատական | |

*«Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ ռեսուրսով տրամադրվող վարկերի դեպքում վարկառուն պարտավոր է կառուցապատողի կողմից շինարարության շահագործման հանձնման ակտը կազմելուց հետո 60 օրվա ընթացքում Բանկ ներկայացնել ձեռքբերվող անշարժ գույքի 100%-ով ավարտվածությամբ սեփականության և գրավի վկայականները: Գույքի 100%-ով ավարտվածությամբ սեփականության և գրավի վկայականները չներկայացնելու դեպքում 60 օրացուցային օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում վարկի պայմանները վերանայվում են և պայմանագրով սահմանված տոկոսադրույքը բարձրացվում է 3% -ով (բացառությամբ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերի):*

**Գույք(եր)ի գծով կադաստրային գրանցումները կատարվում են միայն ստանդարտ ժամկետով (ոչ արագացված կարգով):*

*Վարկի գումարը չի կարող գերազանցել վերաֆինանսավորող վարկի գծով առկա պարտավորությունների մնացորդային գումարը:

**«Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի կողմից սահմանված պայմաններին չբավարարելու դեպքում Վարկային հայտը դիտարկվում է Սեփական ռեսուրսով սահմանված պայմանների շրջանակներում: Բանկն իրավասու է վերանայել պարբեկան տոկոսադրույքը «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույքի փոփոխման չափով: Վարկերը «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի կողմից չվերաֆինանսավորելու կամ ֆինանսավորումը դադարեցնելու դեպքում պայմանագրով սահմանված տոկոսադրույքը փոփոխվում է լողացող տոկոսադրույքի, և նոր տոկոսադրույքը սահմանվում է Հաշվարկային դրույք (ՀԴ) +4.5% չափով, ընդ որում՝ ՀԴ արժեքը հավասար է տոկոսադրույքի փոփոխության պահին Բանկում գործող ՀԴ արժեքին (բացառությամբ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերի):

[1] Բանկի ռեսուրսով հաստատուն(ճշգրտվող) տոկոսադրույքով տրամադրվող վարկերի տոկոսադրույքները վերանայվում են՝ սկսած վարկային պայմանագրի գործողության 37-րդ ամսից՝ Հաշվարկային դրույքի (ՀԴ) փոփոխման դեպքում: Վարկային պայմանագրի գործողության ընթացքում վարկի տոկոսադրույքը վարկի տրամադրման ժամանակ սահմանված տոկոսադրույքի համեմատ չի կարող բարձրանալ կամ իջնել ավելի քան 2.5 տոկոսային կետով:

[2]Լողացող տոկոսադրույքով տրամադրվող վարկի Հաշվարկային դրույքի (ՀԴ) արժեքը հավասար է վարկի տրամադրման վերաբերյալ որոշման կայացման պահին Բանկում գործող ՀԴ արժեքին:

Հաշվարկային դրույքը (ՀԴ) հարապարակվում է Բանկի www.ardshinbank.am կայքում, Բանկի կողմից վերանայվում է յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ին և օգոստոսի 1-ին:Կնքված պայմանագրերի գծով տոկոսադրույքերը վերանայվում են ՀԴ փոփոխությունից մեկ ամիս հետո (եթե ծանուցման մեջ ավելի երկար ամսաթիվ սահմանված չէ)՝ Հաշվարկային դրույքի փոփոխված լինելու դեպքում: Տոկոսադրույքերը փոփոխվում՝ բարձրացվում կամ նվազեցվում են ՀԴ փոփոխության չափով:

Վարկային պայմանագրի գործողության ընթացքում վարկի տոկոսադրույքը վարկի տրամադրման ժամանակ սահմանվածտոկոսադրույքի համեմատ չի կարող բարձրանալ կամ իջնել ավելի քան 2.5 տոկոսային կետով:

## ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

| | ՀՀ դրամ | ԱՄՆ դոլար |
|---|---|---|
| **Գործող** | **9.5%** | **4.0%** |
| 01.08.2023-31.01.2024 թթ. | 9.5% | 4.0% |
| 01.02.2023թ – 31.07.2023թ. | 9.5% | 4.0% |
| 08.08.2022-31.01.2023թթ. | 9.5% | 4.0% |
| 01.02.2022-07.08.2022թթ. | 8.5% | 4.0% |
| 03.08.2021-31.01.2022թթ. | 7% | 4.5% |
| 01.02.2021-02.08.2021թթ. | 6% | 4.% |
| 03.08.2020թ.-01.02.2021թ. | 6% | 4.5% |
| 29.04.2020թ.-03.08.2020թ. | 6.13% | 4.5% |

[3] Եթե Բանկի հետ համագործակցող համապատասխան ընկերության կողմից տրված ձեռքբերված գույքի գնահատման արդյունքում վարկ/գրավ հարաբերակցությունը բավարարում է Բանկի պահանջին, ապա Վարկառուի/համավարկառուի դիմումի համաձայն երկրորդ գրավը կարող է ազատվել արգելանքից՝ ժամկետանց պարտավորություններ չունենալու դեպքում:

## ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ

**ՎԱՐԿԱՌՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԺԱՄԿԵՏԻՑ ՇՈՒՏ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ՄԱՍՆԱԿԻ ԿԱՏԱՐԵԼ (ՄԱՐԵԼ) ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՈՒՆԵՑԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՎՃԱՐՎՈՂ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓՈՎ ԿՆՎԱԶԵՑՎԻ ՎԱՐԿԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐԸ, ՀԱՄԱՄԱՍՆՈՐԵՆ ԿՆՎԱԶԵՑՎԻ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱԽՍԸ. ՏՎՅԱԼ ԴԵՊՔՈՒՄ**

| |
|---|
| **ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱԽՍԻՑ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԵՆ ՎԱՐԿԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐԻ ՄՆԱՑՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԵԳՐՎՈՂ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԸ, ՎԱՐԿԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐԻ ՄՆԱՑՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԵԳՐՎՈՂ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐԸ: ԸՆԴ ՈՐՈՒՄ՝ ՍՈՒՅՆ ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԻՐ ԻՐԱՎՈՒՆՔՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿԸ ՉԻ ԿԱՐՈՂ ԿԻՐԱՌԵԼ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ:** |
| Վարկային պայմանագրով ստանձնած իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում վարկառուն կարող է զրկվել ձեռք բերվող և գրավադրվող գույքի նկատմամբ իր իրավունքներից:<br>Գրավի հաշվին վարկային պարտավորությունների ամբողջական չմարման դեպքում պարտավորությունների ամբողջական մարումը կկատարվի վարկառուի և գրավատուների այլ միջոցների և գույքերի հաշվին: |
| Ժամկետանց պարտավորությունների առկայության դեպքում մարումները կատարվում են հետևյալ հերթականությամբ՝ սահմանված կարգով գրավադրված գույքի բռնագանձման հետ կապված Բանկի կողմից կատարված ծախսերը և վարկային պայմանագրերի շրջանակներում ձևավորված Բանկի նկատմամբ Վարկառուի և/կամ Համավարկառուի այլ դեբիտորական պարտավորությունները,ժամկետանց տոկոսի վրա հաշվարկված (կուտակված) տուժանքի գումար, ժամկետանց Վարկի վրա հաշվարկված (կուտակված) տոկոսագումար, հաշվարկված (կուտակված), սակայն չվճարված ժամկետանց տոկոսագումար, ժամկետանց Վարկի գումարը, վարկի սպասարկման վճարը, Վարկի օգտագործման համար հաշվարկված(կուտակված) ժամկետային տոկոսագումարը, Վարկի գումարը:<br>Դրամական պարտավորությունների կատարման հերթականությունը կարող է փոխվել Բանկի հայեցողությամբ՝ առանց Վարկառուին և/կամ Համավարկառուին տեղեկացնելու: |
| Բանկը պարտավորվում է պայմանագրի առաջարկը յոթ օր առաջ տրամադրել հաճախորդին և յոթ օր մտածելու ժամանակ ընձեռել: |
| Բանկի ՄՈԲԱՅԼ ԲԱՆԿԻՆԳ հավելվածի միջոցով հնարավոր է իրականացնել դրամային փոխանցումներ, կատարել վարկիմարումներ, դիտել հաշիվների մնացորդներն ու գործարքները, կատարել վճարումներ և բազմաթիվ այլ գործարքներ, որոնց կարող եք ծանոթանալ https://www.ardshinbank.am/content/մոբայլ-բանկինգ հղմամբ: |
| Վարկերը տրամադրվում են Բանկի կողմից հաստատված տիպային պայմանագրերի կիրառմամբ: Ավտոկայանատեղիի ձեռքբերման և գրավադրման դեպքում ավտոկայանատեղիի համար ստորագրվում է առանձին վարկի և գրավի պայմանագիր: Գրավի պայմանագիրը (պայմանագրերը) պետք է վավերացվի նոտարական կարգով: Բնակարանի (ավտոկայանատեղիի) նկատմամբ գնման իրավունքի գրավը, կառուցապատման ավարտից հետո՝ սեփականության և Բանկի գրավի իրավունքները և այլ գույքային իրավունքները ենթակա են պետական գրանցման: |
| Գրավի գնահատում իրականացնող ընկերությունների մասին տեղեկատվությունը հրապարակվում է Բանկի պաշտոնական կայք-էջում՝ www.ardshinbank.am: |
| **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝**<br>Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը ձեզ համար տոկոսագումարները և այլ վճարները սահմանվածժամկետներում և չափերով կատարելու դեպքում: Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը կարող եք գտնել Բանկի պաշտոնական www.ardshinbank.am կայքէջում: |

## Աղյուսակ 1

| ***Ֆինանսավորման աղբյուր*** | | **«Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ ռեսուրսի համար տարեկան տոկոսադրույքի սահմանման մեխանիզմ** | |
|---|---|---|---|
| **Կանխավճարի չափ**[1] | **Վարկի գումար և արժույթ** | **մինչև 35 մլն (ներառյալ) ՀՀ դրամ** | |
| | **վարկի ենթատեսակ**[3] | **Էներգաարդյունավետ վարկ** | **Այլ վարկ** |

| | | |
|---|---|---|
| **50% և ավելի** | 13.6% | 14.1% |
| **7.5%-49.99%[2]** | 14.0% | 14.5% |

[1]Սույն աղյուսակի իմաստով վճարված կանխավճարը հաշվարկվում է հետևյալ կերպ՝ (100%-վարկ/գրավ հարաբերակցություն%)

[2]1. 7.5%-ից մինչև 9.99% կանխավճարն ընդունելի է, եթե՝

1) վարկառուն և սեփականատերերը մինչև 30 տարեկան են և չամուսնացած,
2) վարկի գումարը չի գերազանցում 35 մլն ՀՀ դրամը,
3) վարկը չի հանդիսանում էներգաարդյունավետ և մարզային վարկ
4) անշարժ գույքը ձեռք է բերվում առաջնային շուկայից և
5) իրականացվում է կանխավճարի ապահովագրություն:

[2]2. 10-ից 29.99% կանխավճարը ընդունելի է, եթե՝

1) գրավադրվում է լրացուցիչ գույք կամ
2) իրականացվում է հիփոթեքային պարտավորության ապահովագրություն՝ ձեռք բերվող գույքի արժեքի 30%-ի և կատարվող կանխավճարի տարբերության չափով:

[3]Էներգաարդյունավետ վարկ է համարվում Հավելված 1.1-ով սահմանված նպատակով տրամադրվող վարկը, որի գումարը չի գերազանցում 35մլն ՀՀ դրամը:

Գնահատող կազմակերպությունների ցանկին կարող եք ծանոթանալ այստեղ:

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝

ՁԵՐ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ, ԵԹԵ ԴՈՒՔ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵՔ ՁԵՐՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ:

ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՏՈՒՆ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:

ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵԶ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:

ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ ԵՆ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ: